

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԽԻԿ

Գրութիւնք եւ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայելի»ին մէջ աղօրք երեւնալ,

Պատրիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

Քաղաքի մը Դ. Թաղի սրճարաններէ մէկուն մէջ երբեմն այնպիսի աղտոտ արարքներու հանդիսատես կըլլայ մարդ, զոր կարելի չէ նկարագրել առանց արդար ցատումի ա. զգուտնաց: Ու երբ կը տեսնուի, որ այդ արարքներու հեղինակը մէկ քանի հայեր են, որոնք Բագոսին հետ կը խնկարկեն նաեւ խել մը անորակելի հաճոյքներու աստուածը, (գեռւ չը յիշատակուած դիցաբանութեան ցանկին մէջ) իրաւ որ մարդ կը կատարէ ու կը փորձուի հարցունել ինքնին թէ ասոնք մարդ են թէ ճիւղ:

Նիհար քսակ մը իրենց գրպանին մէջ, օղիին շիշը առջեւին, մէկ երկու սրկաններ քովերնին, մարդկային պատուոյ սահմաններէն շատ հեռուն նետուած, հրէշներու պէս կը գոռան ու կը գոռան ու մերթ ընդ մեր անուշ ակնարկներ փոխանակելով այդ քովիներուն հետ, կը շարունակեն իրենց ճշնկոցը, մինչեւ որ կսկսին խուկալ իրենց

աթոռներուն վրայ դիակներու պէս այլափոխուած:

Ու ծիծաղելին հոն է, որ երբ կըսեմք, զատարկուած կը գտնեն իրենց քսակը, կամացուկ մը կողոպտուած նոյն իսկ այդ ընկերակից տղաքներէն, որոնք հեռացած են արդէն արշաւովայրէն, իրենց զահրուն քթին խնդալով:

Եւ մտածել, որ ասոնք բացարձակապէս լքած են իրենց կիները Հայրենիքին մէջ, ահա ինչ որ սալոսփ կազդէ ամեն զգայուն մարդու ու կը ներշնչէ շատ տխուր մտածումներ: Բա՛րուց այս յայտնի անկումը՝ յարաճուն հանդամանք մը ստացած մեր մէջ, թէ՛ ընտանեկան յարկի սրբութեան կը դաւաճանէ և թէ՛ խել մը ընկերային փոխադարձ պարտականութեանց կիրառումը կը կասեցնէ ի միաս իրենց տան ու Հայրենիքին: Ասոնք թէ՛ իրենց ընտանիքին և թէ՛ հանրութեան այն սոսկալի թշնամիներն են, զորս կարծէ ոչ միայն լրագրով ձաղկել, այլ նոյն իսկ ապտակել տեղն ի տեղը, երբ իրենք ինչպէս ըսինք, անձնատուր եղած են անդին անխոստովանելի կրքի մը թելադրութեանցը:

Կը կրկնեմ, նոյն չորրորդ Թաղի այդ գարշելի հերոնները աղտերն են հայ գաղութի ճակտին ու յայտնի փորձանքնե-

ըը իրենց տարաբաղդ ընտանիքին . որոնք չը գիտես որչափ տարիներէ ի վեր կը սպասեն այդ գարշելի ամուսիններուն զրկելիք քանի մը զրուշին . մինչդեռ ասանք օտար երկրի մէջ սրկայ տղաքներէ կը կոյուպտուին :

Թիւ իրենց երեսին :

ԾԱՆՕԹ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ

Երեքշաբթի օրը գումարուած կրօն ժողովին մէջ կարգացուեցաւ ամենայն Հայոց Սրբազան Հայրապետին կողմէ առաջարկարբն ուղղուած մէկ կոնդակը . որով Ն. Ս. Օծուած թիւեր յիշելով հոգեւորս Աթաթման Տ. Գրիգորիս Սրբազանի մահը , կը յայտնեն թէ հանգուցեալը իր եկեղեցական կոչման միշտ հաւատարիմ իւրովսնն ծառայած եկեղեցւոյն , պարկեշտ եւ գործունեայ եկեղեցական մըն էր որուն հոգւոյն հանգիստ կը մայթէ Ս. Հայրապետը :

— Նպատակց Բանձնաժողովին որոշման համաձայն , Հաճնոյ մէջ որբանոց մը բացուած է , ուր կը խնամուին ու կը դաստիարակուին տաւայժմ 25 որբեր :

— Թուսահպատակ Հայերուն երգում Ընելու խնդիրն ալ վերջացեր լինցեր է , Մայր Աթոսին պահանջմանց աննպաստ կերպով : Պետական Խորհուրդին կողմէ տրուած որոշման մը համաձայն , որ կը ծանուցուի պաշտօնապէս , Թուսահպատակ Հայերը արտահանուելու դատարաններուն առջեւ ուստերէն լեզուով երգում պիտի ընեն , իսկ ուստերէն չը գիտցողները թարգմանի միջոցաւ :

— Երուսաղէմի Ս. Բաղդեանցի վանքին սեպհականութիւն կողմ Սիօնի Ս. Փրկչի վանքին չրջապատի նոր որմերը որմեր բարձրացուած են սրբատաշ քարերով եւ անոր փառաւոր գոտը որուն ճակատը զրոյնուած է Ամեն Տ. Երուսթիւն Ս. Պատրիարքին անունը ու շի-

նութեան թուականը , ամբողջովին աւարտեր են Ն. Սրբազնութեան անձնական ծախքովոր 400 սակիէ աւելի գումար մը յատկա դուցած էր այդ նպատակին :

— Աւրփայի եկեղեցիին շինութիւնը արածուող կայսերական Կրտսէն ելած է :

— Ս. Խաչի ասթիւ Արմաշ ուխտադնացութիւն ընողներէն 600 սակի հասոյթ գույացած է վանքին :

— Կիպրոսի ազգայնոց հոգևոր հովուութիւնը Ս. Երուսաղէմի Աթոսին իրաւասութեան աակ գանուելով , որոշմամբ Միտրանութեան Տնօրէն ժողովոյ յիշեալ կզղին հոգևոր հովիւ կարգուեր է Տ. Պետրոս աւսեղայ Սարաճեան :

— Բաքուի հարուստ հայերը ընկերութիւն մը կազմելով առեւտրական պանդա մը հիմնած են : Գրամագլուխն է 3 միլիօն ռըլ . 12 հազար բաժնի վրայ , իւրաքանչիւր բաժնի կարժէ 250 ռուբլի :

Նոր Դեպքախախտհուրդ մը

Հոգով 3 Հոկտ. — Ռուսիոյ կայսրը մը տաղիր է յառաջիկայ դարնան զանազան կառավարութեանց պետական խորհուրդները գումարումի մը հրաւիրելու խաղաղութեան վրայ խորհրդակցելու համար :

Անտէ Օղախուն

Սթօքուլմէն երկուշաբթիի թուականաւ կը հեռագրեն թէ , այն խառնիւրդը որ վերջերս գտնուեցաւ , և որ Անտրէի անունը կը կրէ , ըննութեան ենթարկուելով հաստատուեր է որ Հիւսիսային Բաւարիային կառնեցեալ խառնիւրդն է զոր Անտրէ ծովը պիտի նետէր Հիւսիսային Բաւար անյամ առ ներ :

Ֆիլիպէէն կը գրեն թէ , գեր. Պալ-ճեան վարդապետ իր հրաժեշտի քարոզը տըւեր է : Մեր աստանդաշրջիկ Աստուածպետա-

կանութիւնը այս լուրը իմանալուն պէս, Թ. Բաղարճըգէն առանց մնաք բարովի շունչը ֆիլիպէ կառնէ, փարգապետին տեղը ինք հոն մնալու երազով, բայց Թադ խորհուրդ և Հոգաբարձութիւն նկատելով որ անոր ներկայութիւնը կրնայ նորէն խնդրոյ դուռ բանալ, Գեր. Պաղճեանի հետ համախորհուրդ, «Վարդապետ, զահէթ ես ըրերիս կրնան ու ճամբու ծախքը վճարելով զայն կը վերադարձնեն իր ճգնարանը, Ի Թ. Բաղարճըգ:

ԱԶՔԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ



Ամերիկեան Բերսընս Ուիլիս անուն թերթէն թարգմանուած:

Կապոյտ աչքերն ամէնէն տկարները կը համարուին:

Վեր նայող աչքերն անձնութիւն թեան տխար են:

Բաց աչքերն յանգնութեան նշանակ են:

Կողմնակի նայող աչքերն անվստահելի են:

Թուխ աչքերն ամենէն զօրաւոր ըլլալ կը նկատուին անտարբերներէն:

Փոքր աչքերը խորամանկութեան նշանակ են:

Վար նայող աչքեր լրջութիւն կ'ենթադրեն:

Բնականէն մեղամաղձոտ անձինքներու մէջ շատ քիչ կապոյտ աչք ունեցող կրնայ ըլլալ:

Երկու աչքերու իրարմէ ճիշդ հեռաւորութիւնն աչքին լայնքն է:

Աչքին ճերմկուցն եթէ ծիածանին տակ դանուի, նկարագրի ազնուութիւն կը ցուցնէ:

Երկայն և սուր անկիւն աչքերը մեծ դատողութիւն ու սրամտութիւն կը ցուցնեն:

Թուխ աչքեր բարկութեան կամ յուզման ատեն իւր կանաչի փոխուին, կը ցուցնեն թէ մաղձային բնութիւն ունի:

Աչք մը որուն վերի կափարիչը բիրիւ վրայէն հորիզոնական ուղղութիւնով կ'անցնի,

մտաւորական կարողութիւն կը ցուցնէ:

Եթէ վրայի կափարիչը բիրիւ կէտը կամ աւելին ծածկէ, պարզ խորհրդածութիւն կը նշանակէ:

Անհաստատ աչքեր որ միշտ ասդ անդ կ'երերան, խռովեալ միտք մը կը ցուցնեն:

Կ'ըսուի թէ լուսնոտներու անկեկանոցներու մէջ աչաց ընդհանուր գոյնը թուխ ու սեւ է:

Քիչ արտանանդներով ու երկայն գոգաւոր թարթիչներով որ և է գոյն աչքեր տկար կազմութիւն կը ցուցնեն:

Գիմաղէաները կ'ըսեն թէ այն աչքերն որ լայն են կը ցուցնեն մեծ ուշիմութիւն և անմոռանելի յիշատակ:

Աչքեր որոց բոլոր ծիածանը տեսանելի է, անհաստատ մարդոց կը պատկանին որք յաճախ յիմարութեան հակամէտ են:

Տկար երեւոյթով բաց ու սևեռեալ աչքեր կը ցուցնեն նախանձոտութիւն, անարաշատութիւն, անհաստատ կամակորութիւն:

Գլխուն մէջ իրարու մօտեցող աչքեր, արամադրական դարձած, նախանձ ու յանցանք գտնալու ձև կը նշանակեն:

Երբ աչքին վերի կափարիչին տակի կտուարը կտուարեալ կիւսաշրջանակ է, բարութեան նշանակ է. բայց երբեմն ալ վարկատուութեան և վատութեան:

Կ'ըսուի թէ հանճարեղ մարդիկ ունին վճիտ աչքեր և հանդարտ շարժումք որ մըտաւոր կարողութիւն կը ցուցնեն:

Կապոյտ աչքերն ընդ հանրապէս կնամարդի կը նկատուին, սակայն սխալ է, վասն զի կապոյտ աչքեր միայն կովկասեան ցեղին մէջ գտնուած են, որ ճերմակ ցեղն է և արած է երկրագունդին:

Թէ ազգային թատերախաղեր և թէ եւրոպական լեզուներէ հայերէնի թարգմանուած տպեալ կամ անտպալ թատրերգութիւններու կատակերգութիւններու պէտք ունեցողները զիմէջու են խմբագրութեանս:

ԶԱՆԱԶԱՆՔ

Տրէյֆիւսը կարծուած — Անցեալ շաբաթ օրը Միլանի երկաթուղիի կայարանին մէջ բաւական զուարճալի դէպք մը պատահեցաւ: Կառավարութեան լուր տրուած էր թէ Տրէյֆիւս, իր եղբայրներուն հետ, Սան Ռէմսէն Միլան պիտի ժամանէ շոգեկառքով: Հետագիրը մանրամասն տեղեկութիւններ կու տար, ըսելով որ կառախուսքին թիւն է 439 եւ վազոնը որուն թիւն է 14,923, կառախուսքին վերջին ծայրին երրորդն է: Այսչափ մանրամասնութիւն բնականաբար կուսկածելու պատճառ մը չէր թողուր: Կայարանին մէջ երկու հազար հոգիէն աւելի բազմութիւն մը հաւաքուած էր: Ոստիկանութիւնը զգուշական միջոցներ ձեռք առած էր և խիստ հսկողութիւն կը կատարէր: Մինչև այն առանց վանաղան կայարաններէ հեռագիրներ առնուած էին թէ Տրէյֆիւս կուգայ: Վերջապէս կառախուսքը հասաւ եւ ամբողջ խուժեց այն վազոնին վրայ, որուն թիւը իմաց տրուած էր: «Ինքն է» «Ո՛չ» «Այո՛» ձայներ կը լսուէին. և ահա խարտեաչ մարդ մը, որ ձանձրացածի երևոյթը ունէր, վազոնէն իջաւ և փութով կայարանին պիւֆէն գնաց շրջապատուած ամբոխէն: Հոն աթոռի մը վրայ նստելով կաթով սո՛ւրճ ուղեց: Հետաքրքիրներէն մէկը հարցուց. «Դուք Տրէյֆիւսը չէ՞ք»: «Բայց ոչ, պատասխանեց մարդը: Արդեօք այս գլխու ցաւը շատ պիտի շարունակէ: Սան Ռէմսէն մինչև հոս իւրաքանչիւր կայարանի մէջ հոգիս հանեցին հարցումներով: Իմ անունս է Աթոքէր, հասուածաւ Ութրէիսի մէջ:»

Ամենէն զարմանալի պարագան սա է թէ այդ մարդը բնաւ չի նմանիր Տրէյֆիւսի:

Անտրկիդ գող մը — Լսած էք պատմութիւնը փոստաբանի մը որուն կը յանձնարարուի դատարանի նախագահին կողմէ՝ իր յաճախորդին հետ առանձնանալ բովի խուցը և լաւ խորհուրդ մը տալ անոր: Քառորդ

ժամ մը վերջը, փաստաբանը առեան կը վերադառնայ առանձին:

— Ո՛ր է ամբաստանեալը, կը հարցնէ նախագահը:

— Պատուիրեցիք ինձի որ լաւ խորհուրդ մը տամ անոր: Եւ որովհետեւ յանցաւոր էր ու ապահովապէս պիտի դատապարտուէր, յորդորեցի զինքը որ . . . խոյս տայ, և ելաւ գնաց:

Ասոր ժամ դէպք մը պատահեցաւ նախորդ շաբաթուն Բարիլի դատական պաշտօնատան մէջ: Հանրի-Թօղէֆ Օտուր ունուն եւրիտասարդ մը, որ ամբաստանուած էր թէ աբաւթըման մը պարպած է, պատժական առեանին պիտի ներկայանար. բայց որովհետեւ փաստաբան չ'ունէր, դատարանին կողմէ ի պաշտօնէ փաստաբան մը ցոյց տուին և դատավարութիւնը նիստին վերջաւորութեանը ձգեցին, որպէս զի ամբաստանեալը ժամանակ ունենայ խօսակցելու իր փաստաբանին հետ: Երկուքը մէկանց սենեակ մը քաշուեցան ուր պահակ մըն ալ գրուեցաւ՝ հսկելու համար: Օտուր սկսաւ պատմել իր արկածալից կեանքը, թէ ինչպէ՛ս քանի մը անգամներ փախած էր բանտէն:

— Ինչպէ՛ս, հարցուց պահակը՝ վարմացած:

— Ըստ գիւրին կերպով, պատասխանեց գողը: Եթէ կը հետաքրքրուիք, փորձը կատարեմ:

Եւ մէկ օտքը պատուհանէն դուրս նետեց: Այդ պատուհանը դատարանին բակին վրայ կը նայէր. հետեաբար պահակը չը կասկածեցաւ բնաւ: Բայց չարաճճի Օտուրը նշմարած էր որ շինութեան լաստափայտ մը բարձրացուած էր որուն գերաններէն մէկուն պլլուելով, վար սահեցաւ, և իբր թէ բանուոր մը եղած ըլլար՝ անտարբեր քայլերով հեռացաւ գնաց, առանց բնաւ ուշադրութիւն հրաւիրելու իր վրայ:

Մինչև որ պահակը սթափելով հասկցաւ թէ ձեւացում մը չէր կատարուածը՝ այլ իրական փախուստ մը, գողը աներևութացած էր արդէն:

Ծովուն քակր քաղաւած 38 միլիոն.
Շրանիք. — Ասկէց ճիշդ 100 տարի առաջ
(1799), Հոլանտայի հիւսիսային կողմը գըտ-
նուած Թէրչէլինկ անուն կղզին մօտերը,
38 միլիոն ֆրանքի արժողութեամբ արծաթ
ու ոսկի դրամներով բռնաւորուած ֆրանսա-
կան դրօշակ կրող պատերազմական նաւ մը՝
ժայռերու զարնուելով ընկղմած էր: Այն ա-
տենէն ի վեր ֆրանսացի խուզարկներ նոյն տե-
ղը փնտռողքի ելած էին: 1800 թուական-
ին նոյն գումարին 1 միլիոնը և 1860ին ալ
1.125.000ը յաջողոր են ազատել. բայց ան-
կէ ի վեր եղած ամեն ջանք եւ աշխատու-
թիւնը ապարդիւն կը մնան, որովհետեւ նա-
ւուն ընկղմած տեղը 70 մէգրօ խորութիւն
ունի ու թէնս. դրամներուն գտնուած եր-
կաթէ անտուկները աշխատելու համար բաւա-
կան պայթուցիկ նիւթեր կը գործածուին:
Հիմա խեղճ խուզարկները ամիսներով աշխա-
տելէ ետքը, առանց այդ պատկառելի հարս-
տութենէն բան մը կարենալ ձեռք ձգելու,
թուրքերին կլլելով կը մեկնին եղեր:

ՏԵՍԷՔ ՀԱՅ ՏԱՌԵՐԸ ԻՆՁ ԿՐՍԵՆ



Ար կ'ըսէ. — Ո՛վ որ ձայնս հանել կրնայ,
Անոր բերան բաց կը մնայ:
Բը կ'ըսէ. — Եթէ զիս (ի)ին տան,
Ա'ըլլամ տաճկերէն չունան:
Գը կ'ըսէ. — Եթէ գետէն դուրս ելլամ,
Քեզմէ շատ ետ կը մնամ:
Դն կ'ըսէ. — Կապէ պոչիս մէկ լար,
Խիշտ կը մնամ դալար,
Եը կ'ըսէ. — (ձ)ին և (ն)ին մէջ մանամ,
Տես որչափ բարձր կ'երևամ:
Ձն կ'ըսէ. — Կապեցէք պոչիս բար մը,
Ըլլամ ձեզի պէս մարդ մը:
Էն կ'ըսէ. — Բարձր ձայնով անունըս տան,
Ծանր տղաք խիստ վախնան:
Ըը կ'ըսէ. — Բառի մը վանկ զատել ուզեն,
Պէտքը կ'ըլլամ այն տանն,

Թն կ'ըսէ. — Չըլլայ որ զիս աղես,
Նոյն վայրկենին կը թաղես:
Ժն կ'ըսէ. — Ջիս (ի)ին միացուր,
Կենդանի մ'ըլլամ թունաւոր:
Ին կ'ըսէ. — Եթէ ձայնըս երկարես,
Յունական նօթան սորված ես:
Լը կ'ըսէ. — Ես չըլլամ լուսինին վրայ,
Ինքն ալ կը մնայ ուսին վրայ:
Խն կ'ըսէ. — Ինծի համար ձայն չունի կ'ըսէք:
Քնացողներուն շունչ առնելը դի-
տա՞ծ էք:
Մն կ'ըսէ. — Թէ (կ)ը ինձ հետ պօռալ սկսի,
Ձայններնիս ծակէն կը հասնի բեզի:
Կը կ'ըսէ. — Գծած բառիս մէջէն զիս չես
կարդար
Գիտցիր որ դու ալ ինձ պէս չես
արգար
Հն կ'ըսէ. — Անունըս մօտէն տուր ապակիի,
Նա անմիջապէս պիտի բըրտընի:
Ձն կ'ըսէ. — Եթէ զիս ձախէդ հանես,
Ալ այնուհետեւ ա'իս պիտի գոչես:
Ղը կ'ըսէ. — Թուղթը շուտուիր կ'ըսեն,
Ես ներկայ չըլլամ, տես ինչպէս
կ'ուտեն:
Ճն կ'ըսէ. — Եփած սուրճին մէջէն զիս հանէ,
Խմելուդ պէս քեզ մեռցընէ:
Մը կ'ըսէ. — Եթէ մաղէն դուրս ելլամ,
Բողոր աշխարհի համ կ'ուտամ:
Յն կ'ըսէ. — Երկու անգամ անունըս տաս,
Կ'ըսեն ինչո՞ւ կը խնդաս:
Նն կ'ըսէ. — Բունին վրայէն վար իյնամ,
Հաւ գէշ թոչուն մը կ'ըլլամ:
Շն կ'ըսէ. — Կապեցէք զիս (ե)ին,
Պիտի գանէք մէջ ախոսին:
Ոն կ'ըսէ. — Ուր ըլլալու հասկնալ կ'ուզէք,
Հողին մէջը փնտռեցէք:
Ձն կ'ըսէ. — Հունին վրայ որ նըստիմ,
Հունչ առնելու պէտք չունիմ:
Պն կ'ըսէ. — Եթէ զիս կրկնես,
Իսկոյն կը գրկես:
Ձն կ'ըսէ. — Չըլլայ որ զիս տաս (վ)ի,
Հիտակ կ'երթամ Գայսէրի:
Ռն կ'ըսէ. — Քիչ մը ձայնըս բարձր հանեմ,
Կը կարծեն որ պիտի խածնեմ:

Սն կ'ըսէ.— (հ)ին անուանը հեա կապէ իմ
անունըս ալ
Պիտի ըսեն նա շերթոր հոս, է
անպատճառ:

Վը կ'ըսէ.— Եթէ զիս վուշին վրայէն փակցնես,
Գիտցիր որ ալ զիս ուշ պիտի գտնես:

Տը կ'ըսէ.— Եթէ ձեր գեղին առջեւ նստիլս
տեսնաս,
Պիտի ըսես որ աս ինչ տգեղ կե-
րեւաս:

Րն կ'ըսէ.— Եթէ տուիր անուննիս՝ առաջ(0)
ին, վերջը իմին:
Երախային պեշիկը կ'երերցնէ ըս-
պասուհին:

Յն կ'ըսէ.— Իմ ցեղէս զիս գուրս հանէ,
Ամբողջ մարմինս եղ կը կապէ:

Իը կ'ըսէ.— Հուրին մէջէն գուրս ելլամ,
Անմիջապէս հոր կ'ըլլամ:

Փը կ'ըսէ.— Զիս չտեսած անունըս տան,
Տասն հազար կը հասկընան:

Գն կ'ըսէ.— (ւ)ը և (ջ)ն ինձ ընկեր տուէր,
Ալ անկէ վերջը զիս մտիկ բրէր:

Օն կ'ըսէ.— (ղ)ին հեա երբ միանամ,
Ազնկանց ահանջէն կ'ախուիլ կրնամ:

Ճն կ'ըսէ.— Եթէ (պ)ին հեա զլուի գլխու
տանը,
Հեղինակին ընտիր կնիք մը կ'ըլլանը:
Լոյս Գ. Պ.

ԱՐՄԱՏՈՒԻ ԿԱՊԵԼԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

ՆԻՍՏ Բ.

Յաջորդ իրիկունն ալ տխրահռչակ
ժողովակը Արստուի կապէլան Բ. ան-
գամ հաւաքուած էր, լսելու համար նա-
խագահէն ցորեկէ ան անցած դարձա-
ծը: Ուստի մէկ քանի շիշ օղի կ'անձեղնէին
եաքը, ատեանը կը բացուի:

Տեարք,

Այսօր, առ ոչինչ համարելով թագ-
խորհրդոյ արդեւիքը, ըստ ձեր հրամանի
դացի վարժարանը բացի ու փառաւո-
քապէս մէջը բազմեցայ:

— Հա շէօյլէ, բիռալօ՛ւ, պօյլէ օլմալի:
— Ու մինչդեռ վառնայի թերթէ-

րուն մէջ մեր մասին գրուած յօդուած-
ներուն գէտ սքանչելի և հիանալի խըռ-
պա—եամասիական հերքմադիր մը
պատրաստելու վրայ էի, ահա լսեցի որ
երիտասարդութեան կողմէ պատգամա-
ւորութիւն մը «էնսքէթօռ»ին ներկա-
յանալով, իմ մասին բաւական աննպատու
խօսքեր ըրեր է:

— Տօ՛ քիմ՝ օլըհօր պունլար, հան-
կիսի՞ տէլիսանլուլար տուր. էտոնք վէօ վ
եին որ մեր կործրց կը խառնըւան:

— Սէն օնլարըն քաթրուրլարըն հիշ
գուլագ վէրմէ, մէքթէպէ կիթ ու-
չագլարը ալ օթուր:

— Պէն տէ՛ էօյլէ եաբըհօրըմ՝ ամ-
մա, գարտաշ. պէշ ալթը չօճուգ տան
պաշդա կէլէն օլմայօր. տնտես կիպի
էվլէրի տօլաշըպ թօրլամաղա գալըշորմ
իսէ տէ, պիր շէյ պէճէրէմէտիմ:

— Տիւ սապուռ արէ մուշու շէյթան,
օ պէշին եանիսինա պիրէր սըֆըր աթ-
տուլուն քիմի, էլլի օլուր, պիրէր տա-
հա աթարսան՝ պէշ եիւզ օլուր:

— Էյի ամա, պու սէնին պիլտիղին
քիլէ հիտապը տէյիլտիւր քի սըֆըր աթ-
տըգճազ չօղալըն:

— Պէ քեանպալա, պիզ գալէ տուվա-
րը քիմի սէնին արխանտայըզ կօրլամ:

— Գօրգմայօրըմ՝ ամա՛ եիւրէյիմ թի-
թիւրէյօր. եարըն օ պիր կիւն օ պէշ չօ-
ճուգլար տա կէլմէզլէրսէնէ՛ եարաճարզ:

— Է՛հ, ախլուիթլար ուլը ք. սատ
տուր. պիզ մէխթէպէ կէլլի՛ օթուրուր
կալապալուի կէօթէրիւրիւիս:

— Սէնին օրատան կըմլտանա ճաղին
եօխ տուր, աղնատըն՝ մու:

— Մօմէ, շու շիւշէլէի թօլտուր:

— Սիսէլէրի թօլտուրածայիզ ամա,
գաբինին տիսառիսինտու պիւ թագիմ
ալաճագլիլառ քէվրան պաղլամիս կէլ-
միս, օ թօլանթիւժիս իսթէյօլառ:

— Տօ քիմ՝ քիմէ թօլանմիշ:

— Մա բօթթօն լէյի, էլօ թուրքչազ
պիլմէմ ցօգ ցօգ. նա իսթէ կէլտիլէն:

Եւ ահա պարտապահան ջներու կա-
րաւան մը ներս կը մտնէ, ի գլուխ ու-
նէնալով Պոլսոյ գրավաճառ—հրատա-
րակչի մը ներկայացուցիչը, որ բարեւ-
լով, հետեւեալը կըսէ:

«Տիար նախագահ Բաքոսեան կա-

ճառիս և տիարք եռտիճիք Աշտուրեան կապելանցիս :

«Ես և հետեւորդք իմ, կարգեալ լիագոր փոխանորդք գրավաճառի, խոհարարի, գերձակի, ծխավաճառի, եայլն եայլն, բնակեալ ի Կ. Պոլիս, ի Պոլսեաց եւ ի Փ. Պոլիս, փոխանորդք մօտաւոր և հեռաւոր այն կարգ մը բարեմիտ անձնաւորութեանց, որոնք Սահմանադրական պատմութեան հեղինակին շինած ճաշակը ինկած են, կը պահանջենք որ ալ բաւ համարելոյ այսչափ երթալ դալը, մեր առնելիքները պարունին ամսակաւնէն վար գնելով մեզի յանձնէք, ապա թէ ոչ, (միաբերան) այս ինչ յայտնի լինի ձեզ եղբարք, թէ հանգիստ չի թողունք զձեզ և իրարու ետեւէ բազմապէս պիտի տեղացնենք կարկուտի պէէն :

— Որ կուզես, կորչուն քիմի եաղաւրմիչ անես, տօ որի՞ ինչ կասես, դավալին Աբխազիին չի կանար խաղցնել ձեզի ո՛ւրիշ տի տայ :

— Զգիտենք, մեր փարան կուզենք :

— Զօխ բաթիւաւ իսթէմէզ, մուշու, էսոնք ինչ կուզին քեզնից :

— Ոչինչ, անոնց պահանջներուն հաշիւը սակէ սուաջ մի քանի անգամներ ետեւ ետքսը չամուրս պարքեական գըրութեամբ տուած ըլլալով, հարկ չեմ տեսներ նորէն կրկնելու, հետեւաբար անտեղի և անիրաւ է այս գիտումը :

— Տէմէք՝ ալաճախ վէրէճէխ կալմամիչ :

— Ճա՛ւրմ, նէ՞ սէօյլէյօլունը :

— Զօխ լափ իսթէմէզ, պիզիմ՝ մուշու սալթ սիզին հազկընըզր եէմէզ, պիզ պիլիլիլի :

— Փագաթ պունա տօլանալըրը ճըլլոյ տէրլէր :

— Հէյ շաշուռն, աչկիւզարլուխ տէրլէր :

— Կատակը մէկ կազմ՝ ձեզ եցէք, պարոն, դուք ըսէք, ե՞րբ պիտի վճարէք :

— Վճարել՝ կը զարմանամ սիրելիս, քանի որ այդ միտքով բան մը աւած չեմ : Հիմա ձեզի թէղկեմհէն մէյմէկ քեյօզի կրնամ հրամայունել կընդունիք :

— Վայ քէ մեռնիմ մուշու չէյթան, տիւ ինչ քիլիստոնէ մարդ ես, էսա անիրաւներից արախ ալ կը խմցնես :

— Ինչ ընեմ եղբայր, «Բարի արարէք ատելեաց ձերոց» կըսէ :

— «Աւթանմայան տա Ալլահըն գուլուսըր» կըսէ :

— Է՛ ճանրմ, ալաճախիլար, արախ իչէճէք միսինիզ եօխտա կալիւզ պիտէճէք միսինիզ, չօխ բաթրթի իսթէմէզ :

— Աղնաշլլալ, մէհքէմէյէ միւրաճաթտան պաշգա չարէ եօգ ալըր : — Ըսելով, մարդիկը յուսահատ կը մեկնին :

— Է՛ մուշու չէյթան, պու պօրճալը տա պիլ գալէմտէն թէմիլլէնաի պիլթաի, շիմաի նէրէյէ կէօթիւրէճէք սին պիզի :

— Շանթանա՛ կէօթիւրէճէխ :

— Օյլէ իսէ գալգըն չարուխ կիտէլիմ :

— Էվէթ կիտէլիմ քի եազայը եէնիտէն էլէ վէրմէյէլիմ :

Եւ անմիջապէս կը մեկնին գինետունէն :

Այն միջոցին հեռուէն կը լսուէր մէկ քանի երիտասարդներու ձայնը, որոնք հեռաեալը կերգէին Ակոռիի եղանակովը :

Կապելայի մեծ մասային բոյորտիքը են բազմեր Լայն բաշալը չափունքը ժողովք են հոն կազմեր :

Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր :

Սաստիկ է վէճ, մեծ է խնդիր, զոր հոն տեղ կը խորհին :

Թէ ինչ կերպով նոր հարուած մը տան վարժարանին :

Այո՛, այո՛, տան վարժարանին,

Կէն այս կըսէ մէկն այն կըսէ ճաքէթ բալթօ կուզէ :

Վէզ չափունք ալ «Մօմէ», պիզէ արախ կէթիւր» կըսէ :

Թող վաղն աւառ գպրոց բազմի տիարն Առնեմ Զաւամ :

Իրիկունն ալ նորէն բերէ մեզ այս կապելան :

Այսպէս մեզի նոր զուարթութեան արեւներ կը ծագին :

Խաչագողին շնորհիւ մեր կեանք լինի հեշտին :

ԶԻԿ — ԶԱԿ

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕ

1899 Սեպտ. 25 Շաբաթ գիշեր ժամ 9

Արտաքոյ կարգի փառաւոր ներկայացումն

Ի ՆՊԱՍՏ

Ա. Դեր. ՏԻԿԻՆ ՊԱՅԾԱՌ ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆԻ

Ա. անգամ ըլլալով պիտի ներկայացուի

Տաճկ. լեզուաւ

ՓԱՐԻԶԻ ՍՏԱՅԱԿԸ

Տրամ—Գօժէտի երեք արարուածով

Հեղինակ Պ. Լապիշ

ԱՆՁԻՆՔ

Ժօղէֆ, Ստահակը . Տիկ. Պ. Ֆասուլեան

Ժէնեռալ Մօրէլ Պ. Կ. Պալճեան

Ամէտէ Պ. Ա. Թէրզեան

Պիզօ Պ. Գ. Տիգրան

Մերսիէ Պ. Վ. Որդիք

Պարոն մէծիէ Պ. Օ. Փաշեան

Հէլլէր վերակացու Պ. Լ. Լեոն

Սպասաւոր մը Պ. Գ. Նէրսես

Էլիզա, Ժօղէֆի բոյրը . . . Տիկ. Ա. Արաէմի

Ժիմնասթիք—Պալէթ—Ա. Աբրօպաթ

Օրիորդ Էլէնիի և Եանիի կողմանէ

Բուլղինէլլա կատակերգութիւն 2 արար



ԳԻՆԵՐԸ

Ա. կարգ աթոռ 2 ֆր. Ա. կարգ նստարան

1 ու կէս ֆր. Բ. կարգ նստարան ֆր. 1 կա-

լարի 50 սանդիմ.

Մ. 2.

ԹՈԹՈՎՄՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հա-

տորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, Ա.

Զարպհանէլեանի գրատունը, Վարնա :

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԻԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷՆ

Երաշխաւորեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած

են, որոնց 25,000ը պիտի շահին հե-

տեւեալ կարգաւ.

1899 Յունիս 9ին 1500 թիւեր.

" Յուլիս 7 1500 "

" Օգոստ. 4-5 2000 "

" Սեպտ. 3-4 " "

" " 23-24 " "

" Հոկտ. 13-31 16,000 "

Մէկ ոթերգ.

1, 25 Ֆ.
2 2, 50
3, 50
3 3
2, 15
14, 40

Գաւորդ

2, 50 Ֆ.
4
5
7
6
4, 30
28, 80

Կէս

5 Ֆ.
8
10
14
12
8, 60
57, 60

Ամբողջ

10 Ֆ.
16
20
28
24
17, 20
115, 20

Երջակայ քաղաքներէն եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:

Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պար-
տաւոր է առջի կարգերուն փոխարէնն
ալ վճարել:

ОТГОВОРНИКЪ М. СКОЛОВЪ
Печантица Взаимность — "Варна."

Գնեալ և մանրամասն տեղեկութեանց համար պէտք
է գրեմէ Սեպտեմբար Տիար ՍԱՐԳԻՍ ՔԱՐԳԻԷԼԵԱՆ,
միակ գլխաւոր գործակալ առջն վիճակահանութեան,
Վարնա, Մուսլլա